Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 883 - Ա որոշման

«ՔՈՎԻԴ-19-Ի և ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐՇԱՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարձրացնել տուբերկուլյոզով հիվանդների, միգրանտների և նրանց ընտանիքների, ինչպես նաև այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների իրազեկվածությունը Քովիդ-19-ի և դրա դեմ պատվաստման վերաբերյալ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործը	Գլոբալ հիմնադրամ (Շվեյցարական Համադաշնություն)
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևան և ՀՀ մարզեր, բնագավառը՝ առողջապահություն
6.	Ծրագրի բյուջեն	5,241,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևանի և ՀՀ մարզերի ազգաբնակչություն, ներառյալ տուբերկուլյոզով հիվանդներ, միգրանտներ և նրանց ընտանիքի անդամներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրում ընդգրկված կամավորների վերապատրաստում Քովիդ-19-ի և պատվաստման վերաբերյալ: Բյուջե՝ 598,000 դրամ, ժամանակահատված՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15: 2. Տեղեկատվական հանդիպումներ տուբերկուլյոզով հիվանդների, միգրանտների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև Քովիդ-19-ի իրազեկմանն ուղղված արշավ խոցելի այլ խմբերի ներկայացուցիչների համար:

		Բյուջե՝ 2,687,500 դրամ, ժամանակահատված՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15: 3. Կազմակերպական ծախսեր (աշխատավարձեր՝ 1,580,000 դրամ և վառելիքի ձեռքբերում՝ 375,500 դրամ): Բյուջե՝ 1,955,500 դրամ, ժամանակահատված՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Քովիդ-19-ի և պատվաստման վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում, տպագրում և տարածում՝ 1,568,700 դրամ: 2. Վառելիքի ձեռքբերում՝ 375,500 դրամ: 3. Մնդի ձեռքբերում և հյուրանոցային ծառայություն՝ ծրագրում ընդգրկված կամավորների, ինչպես նաև տուբերկուլյոզով հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար նախատեսված դասընթացների և տեղեկատվական հանդիպումների ընթացքում նախատեսվող հյուրասիրության համար՝ 1,844,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական ծախսեր, ներառյալ՝ ծրագրի անձնակազմի աշխատավարձեր՝ 1,580,000 դրամ և վառելիքի ձեռքբերում՝ 375,500 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է Երևանում և ՀՀ մարզերում պոլիկլինիկաների և ամբուլատորիաների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ դոնորին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

27.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ